ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 07-Ա «10» հունվար 2020

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ /ՀԱՎԱՍՏԱԳՐԻ/ ՀԱՄԱՐ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010թ. մայիսի 18-ի թիվ 395-Ն հրամանով հաստատված «Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի /հավաստագրի/ համար քննության կազմակերպման և անցկացման» մասին կարգի 9-րդ և 10-րդ կետերը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի /հավաստագրի/ համար քննությունների կազմակերպման և անցկացման նախապատրաստական աշխատանքները կազմակերպելու նպատակով.
   1) Նախարարության անձնակազմի կառավարման վարչությանը՝ հավակնորդների փաստաթղթերն ընդունել 2020թ. հունվարի 10-ից հունվարի 31-ը ներառյալ, ժամը 09^{00}-ից 12^{00}-ը /բացի շաբաթ և կիրակի օրերից/ նախարարության անձնակազմի կառավարման վարչությունում:
   2) 2020թ. փետրվարի 5-ին նախարարի հաստատմանը ներկայացնել հավաստագրման ժամանակացույցը:

2. Նախարարության հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչությանը՝ հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքի /հավաստագրի/ համար հավակնորդների փաստաթղթերի ընդունման մասին հայտարարության տեքստը տեղադրել նախարարության կայքում և սահմանված կարգով ապահովել զանգվածային լրատվական միջոցներով հրապարակումը:
3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի խորհրդական Գոհար Մամիկոնյանին:

Invalid signature

X

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378 **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**